

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Հ. Աբբասիկի վրայ :

ԱՌԽԵԼՆԹԱՑՅՈԳՈՒԱԾԻՆ ՄԵՋ ԸՍԻՆՔ
թէ մարմինները ձայն հանելու ատենը օդուն թրթռմունք մը կուտան, ու աս օդոյ ծածանմունքը կամ ալիքները կլոր շրջանակներ ձեանալով՝ ձայնահան մարմնէն կը հեռանան. և թէ որ ձայնահան մարմնոյն ու մեր ակրնին մեջտեղը արգելք մը չկայ, ձայնը շիտակ մեր ակնջին կը հասնի. անոր համար ձայն մը լսած ատենիս կրնանք նոյն ձայնը հանող մարմնոյն որ կողմը ըլլալը գիտնալ, և նոյն ըրտկութեամբ երթալով՝ կրնանք գտնել. ուստի օդոյ ան մասունքն որ նոյն շտկութեամբ կը ծածանին՝ ձայնական ճառագայթ կ'ըսուին, իսկ ան մարմինը՝ ուսկից ձայնը կ'ելլէ՝ ձայնական կեղրոն. և աս ճառագայթները ամէն դին հաւասար կը սփոխն, անոր համար ամէն դին եղողներն ալ նոյն ձայնը կը լսեն:

Հապա թէ որ աս ճառագայթներուն դէմ արգելք մը ելլէ, զոր օրինակ պինդ կամ առածգական մարմին մը, որ չկարենան առաջ երթալ, իր շարժմունքը ասով չդադրիր. հապա նոյն մարմնոյն ինչ անկեամբ որ զարնուեցաւ՝ նոյն անկեամբ անկէց ետ կը դառնայ, և ան ատեն իրեն կեղրոնը կ'ըլլայ նոյն արգելիք մարմինը, և իրեն ճառագայթները կը սկսին առջինին ներհակ շարժմունք առնուլ՝ առանց առանց առջի ճառագայթից արգելք ըլլալու. և աս անդրադարձած ձայնն է աբբասիկ կամ գանգին ըսուածը: Այս արձագանգ տուող մարմինը կրնանք հայլիի մը նմանցընել. այսինքն ինչպէս որ հայլիին վրայ զարկած լուսոյ ճառագայթները ետ կը դառնան, ու մէջը մեր կերպարանքը

կը տեսնուի, այսպէս ալ պինդ մարմնոյն վրային մեզի կ'անդրադառնայքուն ձայնահան մարմինը հայն մարմնոյն ձայնը. անոր համար շատ անգամ կը խաբուինք՝ կարծելով թէ բուն ձայնահան մարմինը հան է՝ ուսկից որ միայն անոր արձագանգը կը լսենք. ասկէց է որ շատ անգամ աջ կողմէն զարնուած զանգակի մը ձայնը՝ ձախ կողմանէ կը լսենք, և կարծենք թէ զանգակն ալ հան է:

Ո՞ր և իցէ կարծը ու առածգական մարմիններ արձագանգ կրնան հանել, ժայռ եղեր է, տուն, պատ, այր ու կամար եղեր է. ամէնքը փորձած կ'ըլլան թէ հորերն ու ջրշեղջները ինչպէս որոշ արձագանգ կուտան: Այսոր համար է որ կամարակապ սրահի մը մէջ ճառ որ խօսուի, թէպէտ և սրահը պզտիկ ըլլայ՝ որոշ ըլլալուիր. վասն զի արձագանգի ճառագայթները շուտով ետ դառնալով՝ բուն ձայնական ճառագայթից հետ կը շփոթին ու կը խառնուին: Հուվմայեցիք դերասաններու ձայնը աղէկ լսել տալու համար՝ իրենց թատրոններուն անկիւնները մեծամեծ պղնձէ աւազաններ կը դնէին, անոնց զարնուելով ձայնին ճառագայթները՝ ձայնը աւելի որոշ կը լսուեր. միայն պէտք էր որ դերասանները ծանր ու որոշ հնչէին:

Չայնական ճառագայթներուն արգելքները որչափ որ շատնան՝ արձագանգն ալ այնչափ անգամ կը կըրկնուի. և որովհետեւ մէկ ըոպէի կամ երկրորդական վայրկենի մէջ ձայնը 337 մեթր տեղ կը քալէ ըսինք, ուստի թէ որ արգելքը ասոր կէսին չափ հեռու ըլլայ, ձայնին ճառագայթը ինչուան հոն հասնելու համար կէս ըոպէ կ'ուզէ, կէս ըոպէէն ալ արձագանգը կը դառնայ ունորէն մեզի կը հասնի ամբողջ մէկ վայրկենի մէջ. և որովհետեւ մէկ ըոպէի մէջ կրնանք հինգ վեց վանկ որոշ որոշ հնչել, ուստի ան վանկերուն արձագանգը ետեւէ ետեւ որոշ կրնանք ալլաւել: Ի՞այց աս ալ յայտնի է թէ արգելքը որչափ հեռու ըլլայ,

արձագանգն այնչափ տկար կ'ըլլայ .
վասն զի ձայնական շառաւիղներն ալ
քանի որ իրենց կեդրոնէն հեռանան՝
այնչափ կը ծաւալին ու կը տկարանան :

Վիլքէր անունով յիսուսեան կրօ-
նաւորը կ'ըսէ թէ բերդի մը պատուհա-
նը այնպէս շինած էր՝ որ մէկը դիմացը
կեցած խօսէր նէ , 40 անգամ ըսած
բառը կը կրկնուէր : || էրտէօն՝ քա-
ղաքին մօտ երկու աշտարակ կայ դի-
մացէ դիմաց շինուած . թէ որ մէկը
ասոնց մէկուն ստորոտը կեցած՝ բարձր
ձայնով խօսի , իր խօսածին արձագան-
գը շատ անգամ կը լսէ . շատ երևելի
է նաև Աիլանի Աիմոնեթմայի ար-
ձագանգը (որուն վրայ զատ կը խօ-
սինք) , Անդղիայի մէջ ալ Արդզներինը :

Ձայնին շառաւիղներու ընթաց-
քին կանոնովը շինուած են նաև ձայ-
նատար ու ձայնաբեր փողերը . առջի-
նը հեռու տեղ ձայն հասցընելու կը
գործածուի , իսկ երկրորդը խուլերը
կը բանեցընեն՝ ականջներնուն կոթըն-
ցընելով , որպէս զի ձայնը դիւրաւ
լսեն . ասոնց երկուքին ալ սկիզբը աս
է որ ցրուած ձայնական շառաւիղնե-
րը մէկ կեդրոնի վրայ հաւաքելով՝ ա-
նոնց ազգեցութիւնը կը զօրացընեն :
Կը պատմուի թէ հին ատեն Դիոնե-
սիոս բռնաւորը իրմէ գատապար-
տուած յանցաւորներուն տրտունջ-
ներն ու անէծքը լսելու համար՝ որ ի-
րեն դէմկ'ընէին , բանտին առաստա-
ղէն դէպ 'ի վեր իր պալատը խխնջա-
ձե խողովակ մը շինել տուեր էր , որով
անոնց ամէն խօսածը որոշ կը լսէ ե-
ղեր : Խինանք ըսել թէ մեր ակընջին
կաղմութիւնը բոլորովին աս կանոն-
ներուն համեմատ շինուած է . ակըն-
ջին գլխաւոր մասունքն են բաւիղը ,
խխնջաձեը , թմբուկն ու լսողական
ջղերը , որոնց թրթուալովը՝ ձայնի
զգացմունքը ինչուան ըղեղնիս կը հաս-
նի :

1 Աէրտէօն գաղղիոյ Լորէն նահանգին Մէօլ
գաւառին երևելի քաղաքն է :

Արդուս ներքին ձայնական գոր-
ծարանը , այսինքն շնչափողը , սրնգի կը
նմանի . վասն զի թոքին օդն որ ելլէ ,
կուգայ շնչափողին նեղ ծակէն գուրս
կ'ուզէ ելլէլ , ան ատենը ձայն կը ձեւա-
նայ , ինչպէս թէ որ սրնգի մէջ փչելու
ըլլաս՝ ձայն կը հանէ . շնչափողին ձայն
հանող ծակը կամլեզուակը որչափ որ
լայն ըլլայ՝ ձայնն ալ այնչափ հաստ
կ'ելլէ , որչափ ալ նեղ ըլլայ՝ ձայնն
ալ բարակ կ'ելլէ . անոր համար է որ
էրիկ մարդկանց ձայնը աւելի հաստ
է քան թէ կանանցը . բայց մարդս
երբոր ուզէ կրնայ ջղերովը իր խռչա-
փողին ծակը հաստըցընել ու բարակ-
ցընել , անով այլեւայլ ձայներ հանել :
Խակ ձայնին արտաքին գործարան-
ներն են լեզուն , պուկունքը , քիմքը ,
քթին ծակերն ու ակուաները . ա-
սոնք այլեւայլ կերպով ծոմըուկելով՝
շատ մարդիկ տեսակ տեսակ կենդա-
նեաց ձայներ կը ձեւացընեն . ոմանք
ալ այնպէս կը խօսին որ կարծես թէ
ձայնը իրենց փորէն կուգայ , կամթէ
հեռու ու մօտ եղած մարդկանց ձայ-
ները ամենաձիշդ կը ձեւացընեն , և
ասոնք որովայնախօս ալ կ'ըսուին :

Հ . Օ . ԳՈՒՐԳ :

ՀԱՆԵԼՈՒԿ

Անծակ մարդարիտ , անոլոր գերձան ,
Աստուած կուշարէ , մարդըն կուքակէ :

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԷՐ ԱՅՈՒ :

Էջ	Դրա	Հիմաւ	Առաջն
292	23	աստեղ	աստեղց
	11	սրբիկ	որբիկ
293	5	յամարտոյն	յամայոյն